

մառ ժամերուն երկարաձիգ տրտմութիւնը, մեր աշխատանքը ընելով տանելի, անուշ նոյնիսկ (քանի որ հաճոյքով կը սպասէինք լուսնալուն, մեր գիւղականերէն փախչելու աճապարանքը չհասկնալով յստակ): Այդ երգը զիս կը տանէր, կ'ազատէր թուրք քաղաքին դաժան բարեխառնութենէն շատ անդին, նախ՝ լեռները իմ գեղին, յետոյ՝ այն երկիրը, ուր մերինները կ'արհամարհէին թուրքը, թաթարը, առնուազն չունէին անոնցմէ ոչ մէկ վախ, նուաստութեան զգացում-բան մը, որ մեր խմած ջուրին, շնչած օդին մէջ իսկ ներարկած էին թուրքերը այդ քաղաքին մէջ, այնքան գեղեցիկ իբրեւ բնութիւն ու տեսարան, կլիմայ ու մարդեր: Իր բերնէն Սայաթ-Նովէն անպատում, խենթեցնող քաղցրութիւն էր, ա'յնքան՝ որ իմ քովիկս սանդիկ ծեծող թաթար հարսնուկին աչքերը կը խոնաւնային: Ու միւս աշուղները, իրենց ամէնէն սրտառու չ եղանակներով: Բայց մանաւանդ ժողովրդական երգերը, օրերեդ, մահերդ, հարսներդ, սիրերդ, բոլորին՝ բառերէն վեր, Կովկասի հողէն կազմուած հոգիին անհուն թափանցումովը մեզմէ ներս: Թաթար հարսնուկն ու մատղաշ աղջիկները իրենց տուններուն մէջ դեռ չմոռցրած (Պրոսպայի շուրջը 78ի պատերազմէն գաղթական հազարաւոր թաթարներ կ'ապրէին աղքատիկ ու խեղճ, պահելով Կովկասի -ուրկէ գաղթած էին- բարքերը, նոյնիսկ տարազը) աղաղակները կը զգային պարոնիկին ձայնովը: Ու այդ պարոնիկը կը պատմէր մեզի Րաֆֆիի վէպերը, կենդանի, քաղցր, կարծես գրուած էջ մը կարդալով, այնքան իր հիւանդոտ պատանութիւնը զինքը աճեցուցած էր ներսէն: Գինովութիւն մըն էր այդ բարբառը լսել իր բերնէն:...

Թուրք լրտեսին վախը չքացաւ ինքնաբերաբար: Բայց ահա աւելի մեծը.

-Հա՞յ:

Խօսակցութեան նիւթը՝ ազգային իրականութիւնը, որ երեք անգամ զատուած էր բառերուն հեղեղէն հազիւ ըրպէ մը տեւող խօսքի ընթացքին: